

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարգելի հաճախորդ,

Շնորհակալություն ենք հայտնում «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ ծառայություններից օգտվելու համար: Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ ստորև սահմանված Վարկավորման ընդհանուր պայմաններին (այսուհետ նաև՝ Ընդհանուր պայմաններ), որոնց պահպանմամբ «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) իրականացնում է վարկավորումը:

Ընդհանուր պայմաններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

Հաճախորդ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից օգտվող կամ օգտվելու ցանկություն հայտնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

Կողմեր՝ Հաճախորդն ու Ընկերությունը միասին:

Վարկ՝ Ընկերության կողմից Վարկային պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Հաճախորդին տրամադրված դրամական միջոցներ, ներառյալ՝ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, վարկային գիծ, փոխառություն, կրեդիտ և այլ դրամական միջոցներ: Ընդ որում, Վարկն իր մեջ ներառում է նաև Վարկային պայմանագրի համաձայն հաշվարկված տոկոսները, ձևակերպման և սպասարկման վճարները, տույժերը, տուգանքները, վնասները, Վարկային պայմանագրի հիման վրա ծագած պարտքի վերադարձի ուղղությամբ Ընկերության կատարած բոլոր ծախսերը, ինչպես նաև Վարկային Պայմանագրի համաձայն Հաճախորդի կողմից Ընկերությանը վճարման ենթակա բոլոր գումարները:

Սպառողական Վարկ կամ Կրեդիտ՝ վարկ կամ կրեդիտ, որը՝

- տրամադրվում է ֆիզիկական անձանց և օգտագործվելու է բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման կամ այլ սպառողական նպատակներով:
- տրամադրվում է ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին, չի գերազանցում Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենքով սահմանված սահմանաչափը և հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության կրեդիտ:
- տրամադրվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին և չի գերազանցում Սպառողական կրեդիտավորման մասին ՀՀ օրենքով սահմանված սահմանաչափը:

Ծառայությունների նկարագիր՝ Ընկերության կողմից հաստատվող փաստաթուղթ, որը պարունակում է Ընկերության կողմից առաջարկվող առանձին ծառայությունների հատուկ պայմանների նկարագրությունը, ներառյալ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նվազագույն պահանջները, դրանց դիմաց գանձվող տոկոսները, միջնորդավճարները, այլ վճարներն ու պայմանները:

Վարկային Դիմում կամ Դիմում՝ Հաճախորդի կամ Ընկերության կողմից համապատասխանաբար մյուս կողմին՝ Ընկերությանը կամ Հաճախորդին ներկայացված օֆերտա, որով օֆերտա ներկայացրած կողմը առաջարկում է մյուս կողմին իր հետ կնքել Վարկային պայմանագիր: Ընդ որում, Դիմումը Հաճախորդի կողմից ներկայացվելու դեպքում Դիմումի ներկայացմամբ Հաճախորդն ընդունում է նաև վարկավորման Ընդհանուր պայմանները և Ծառայության նկարագիրը՝ համաձայնելով վերջիններով սահմանված բոլոր պայմաններին և պահանջներին:

Ակցեպտ՝ Ընկերության կամ Հաճախորդի կողմից համապատասխանաբար մյուս կողմին՝ Հաճախորդին կամ Ընկերությանը ներկայացված պատասխան, որով ակցեպտ ներկայացրած կողմը համաձայնում է ընդունել մյուս կողմի Վարկային Դիմումը և վերջինիս հետ կնքել Վարկային պայմանագիր: Ընդ որում, ակցեպտը Հաճախորդի կողմից ներկայացվելու դեպքում, ակցեպտի ներկայացմամբ, Հաճախորդն ընդունում է նաև վարկավորման Ընդհանուր պայմանները և Ծառայության նկարագիրը՝ համաձայնելով վերջիններով սահմանված բոլոր պայմաններին և պահանջներին:

Վարկային Պայմանագիր կամ Պայմանագիր՝ Ընկերության և Հաճախորդի միջև վարկային, (իսկ առանձին դեպքերում՝ նաև դրա վերադարձն ապահովող ապահովման միջոցի, ներառյալ գրավի) հարաբերությունները կարգավորող պայմանագիր, որը կարող է կնքվել Կողմերի միջև որպես մեկ միասնական փաստաթուղթ կամ Կողմերի միջև Դիմում և Ակցեպտ փոխանակելու միջոցով՝ այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով: Ընդ որում, Վարկային Պայմանագրի անբաժանելի մասն են հանդիսանում նաև Ընդհանուր պայմանները, տվյալ Վարկի առնչությամբ առկա Ծառայությունների նկարագիրը և Վարկային պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ որպես այդպիսին նշված այլ փաստաթղթերը, մասնավորապես՝ «Ինչ անել, եթե բողոք ունես» փաստաթուղթը, Վարկի մարման ժամանակացույցը, անհատական թերթիկը, Հաճախորդի համաձայնության առկայության դեպքում արբիտրաժային համաձայնությունը և այլն:

Սպառողական վարկավորման Պայմանագիր կամ Պայմանագիր՝ վարկավորման/կրեդիտավորման պայմանագիր, որով Ընկերությունը տրամադրում է Սպառողական Վարկ կամ Կրեդիտ:

Անձնական տվյալ՝ Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի շրջանակներում անձնական տվյալ հանդիսացող ցանկացած տվյալ, այդ թվում նաև Հաճախորդի վերաբերյալ ցանկացած այլ տվյալ, որն Ընկերությունը օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ ստանում է անձամբ Հաճախորդից, տեղեկատվական շտեմարաններից և այլ աղբյուրներից:

Հարթակ՝ պաշտոնական www.credofinance.am և www.icredo.am կայքեր, մոբայլ հավելվածներ և սոցիալական ցանցեր կամ տեխնիկաձրագրային այլ միջոցներ:

Վարկային պայմանագրի կնքումը

1. Ընկերության կողմից տրամադրվող սպառողական և այլ վարկերից օգտվելու համար Հաճախորդը Ընկերություն է ներկայացնում Ընկերության կողմից սահմանված Դիմումի ձև:
2. Վարկային պայմանագիրը համարվում է կնքված՝ Ընկերության կողմից Հաճախորդի Դիմումին ի պատասխան Հաճախորդին Ակցեպտ ներկայացնելու, իսկ այն դեպքում, երբ Ընկերության Ակցեպտը Հաճախորդի ներկայացրած Դիմումից տարբերվող պայման/ներ/ով է, ապա Ընկերության նման Ակցեպտը համարվում է Հաճախորդին ներկայացված Դիմում, որպիսի պարագայում Վարկային պայմանագիրը համարվում է կնքված Հաճախորդի կողմից Ընկերությանն Ակցեպտ ներկայացնելու կամ Կողմերի միջև միասնական Վարկային պայմանագիր կնքվելու պահից, եթե Ակցեպտով, Ծառայության Նկարագրով կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ Վարկային պայմանագիրը կնքված համարելու այլ ժամկետ սահմանված չէ:

Վարկի տրամադրումը

3. Վարկը տրամադրվում է անկանխիկ՝ Հաճախորդի բանկային հաշվին կամ քարտին փոխանցելով, եթե Ծառայությունների նկարագրով այլ բան սահմանված չէ: Վարկը համարվում է տրամադրված այն Հաճախորդի բանկային հաշվին կամ քարտին փոխանցման պահից:
4. Վարկի գումարը փոխանցելիս, այն նվազեցվում է ձևակերպման միանվագ վճարով Վարկային պայմանագրում և Ծառայությունների նկարագրում նշված չափով:
5. Վարկի տրամադրման համար նախատեսված բանկային հաշվի նկատմամբ արգելանք կիրառված լինելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կիրառված արգելանքի համար հիմք ծառայած պարտքի գումարը կարող է գանձվել վարկի գումարից:
6. Որպես Վարկի տրամադրման նախապայման կամ հետպայման Ընկերությունը կարող է առաջադրել ապահովման միջոց, այդ թվում նաև Ընկերության համար ընդունելի գրավ, երաշխավորություն կամ Ընկերության կողմից սահմանված և/կամ վերջինիս համար ընդունելի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող այլ ապահովման միջոց տրամադրելու պահանջ:
7. Կիրառելիության դեպքում Վարկային պայմանագրի նոտարական վավերացման, դրանից բխող իրավունքների պետական գրանցման և/կամ այլ օժանդակ ծառայությունների, ինչպիսիք են ներառյալ, բայց չսահմանափակվելով գրավի գնահատումը, ապահովագրությունը և այլն, գծով առաջացող բոլոր ծախսերը կրում է Հաճախորդը, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ: Ընդ որում, եթե վերոնշյալ գործողություններից ցանկացածը կամ բոլորը սահմանված է/են որպես Վարկի տրամադրման նախապայման, ապա դրանք կարող են Հաճախորդից պահանջվել, կամ վերջինիս բանկային հաշիվներից անակցեպտ կարգով գանձվել նախքան Վարկի տրամադրումը, որի վերաբերյալ Հաճախորդի համաձայնությունը համարվում է տրված Ընդհանուր պայմանները Հաճախորդի կողմից ընդունվելու պահից:
8. Վարկի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են Վարկային պայմանագրում և Ծառայությունների նկարագրում նշված չափով՝ վարկի գումարի տրամադրման օրվանից մինչև վարկի փաստացի ամբողջական մարման օրը:
9. Վարկի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են օրական կտրվածքով Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարվա 365 օրերի հաշվարկից:
10. Ծառայությունների Նկարագրով նախատեսված դեպքերում Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը՝ այդ մասին Հաճախորդին ոչ ուշ քան 7 (յոթ) աշխատանքային օր առաջ գրավոր եղանակով ծանուցելով: Տոկոսադրույքի չափը պայմանավորող չափանիշներն են Վարկային պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի 1 (մեկ) և ավել տոկոսային կետով փոփոխումը կամ ՀՀ դրամի 5% (հինգ տոկոս) և ավել արժեզրկումը կամ արժեվորումը: Տոկոսադրույքի փոփոխության չափը հաշվարկվում է մարման ենթակա Վարկի մնացորդի նկատմամբ: Անվանական տոկոսադրույքի փոփոխման հիմքում ընկած գործոնի մեծության մասին Վարկառուն կարող է տեղեկանալ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջից (www.cba.am):
11. Վարկային պայմանագրով գրավի առարկա հանդիսացող գույքի ապահովագրության, գրավի առարկա հանդիսացող գույքի գնահատման, ինչպես նաև Վարկի տրամադրման նախապայման կամ հետպայման հանդիսացող այլ գործողությունների և/կամ ծառայությունների դիմաց վճարելու պարտավորությունները Հաճախորդի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (ներառյալ՝ երրորդ անձ-գրավատուների կողմից) դեպքում Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի (ներառյալ՝ երրորդ անձ-գրավատուների պարագայում) փոխարեն կատարել վերոնշյալ գործողությունների և ծառայությունների առկայությամբ ծագող բոլոր վճարման պարտավորությունները և ըստ այդմ նշված գումարի չափով պահանջի իրավունք Հաճախորդի նկատմամբ ձեռք բերելով:
12. Որպես Վարկային պայմանագրի ապահովման միջոց՝ Գրավի առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքի 30 (երեսուն) և ավել տոկոս նվազման, Հաճախորդի ֆինանսական վիճակի վատթարացման, ֆինանսական, այդ թվում նաև վարկային ծանրաբեռնվածության ավելացման, վարկային պատմության վատթարացման, եկամուտների նվազման, այդ թվում նաև ցանկացած անձնական կամ այլ հանգամանքի վրա հասնելու դեպքում, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից Վարկային պայմանագրով պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը, ինչպես նաև Ընդհանուր պայմաններով սահմանված բոլոր այլ դեպքերում Ընկերությունը իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ հրաժարվել Վարկի գումարը Հաճախորդին տրամադրելուց, իսկ Վարկն ամբողջությամբ կամ մասամբ տրամադրված լինելու դեպքում՝ Վարկի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնել Հաճախորդին:

Վարկի մարումը

13. Վարկի մարման կարգն ու չափը սահմանվում են Ծառայությունների նկարագրով: Եթե այլ բան սահմանված չէ՝ Ծառայությունների նկարագրով, Վարկը և տոկոսները ենթակա են մարման հավասարաչափ (անուիտետային կարգով):
14. Եթե տվյալ վարկատեսակի մարման հատուկ պայմաններ նախատեսված չեն Ծառայությունների նկարագրով, Վարկը կարող է մարվել հետևյալ եղանակներից մեկով.

- 14.1 Ընկերության դրամարկում Վարկի մարմանն ուղղված գումարը կանխիկ վճարելով,
- 14.2 Ընկերության կողմից նշված բանկային հաշվին Վարկի մարմանն ուղղված գումարը փոխանցելով կամ վարկային կողի/պայմանագրի համարի կիրառմամբ Վարկի մարմանն ուղղված գործարք կատարելով,
- 14.3 Ընկերության հետ համագործակցող՝ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով Վարկի մարմանն ուղղված գումարը կանխիկ վճարելով:
15. Եթե այլ բան նախատեսված չէ Ծառայությունների նկարագրով, Հաճախորդի կողմից Վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում վարկի ժամկետանց մասի նկատմամբ կիրառվում է նաև Ծառայությունների նկարագրով սահմանված տուգանային տոկոսադրույքը: Արտարժույթով տրամադրված Վարկերի դիմաց տոկոսներն ու տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ դրամով, եթե Հաճախորդը ցանկություն չի հայտնել տոկոսների և տույժերի վճարումն իրականացնել վարկի արժույթով: Ընդ որում՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդել Կրեդիտի մարումների վրա:
16. Հաճախորդն ընդունում է, որ իր անունից Վարկի մայր գումարը, տոկոսները, տույժերն ու Վարկային պայմանագրից բխող ցանկացած այլ վճարում կարող է կատարել ցանկացած անձ և սույնով կարգադրում է Ընկերությանը Հաճախորդի օգտին առանց լիազորագրի հանդես եկող ցանկացած անձից ստանալ Վարկային պայմանագրի համաձայն վճարման ենթակա բոլոր գումարները, որի վերաբերյալ Հաճախորդի համաձայնությունը համարվում է տրված Ընդհանուր պայմանները Հաճախորդի կողմից ընդունվելու պահից: Ընդ որում, Ընկերությունն իրավունք ունի նախքան գումարներն ընդունելը, վճարում կատարողին նույնականացնելու և/կամ փողերի ծագման աղբյուրը պարզելու համար պահանջել փաստաթղթեր և այլ տվյալներ, որոնք չներկայացվելու կամ մասամբ ներկայացվելու դեպքում իրավունք ունի մերժել Վարկային պայմանագրի համաձայն վճարումների ընդունումը, ինչի արդյունքում Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած վնասների կամ այլ անբարենպաստ նյութաիրավական հետևանքների համար:
17. Վարկի մարման գումարներն առաջին հերթին ուղղվում են Վարկի գումարը հարկադրաբար վերադարձնելու ուղղությամբ Ընկերության կատարած դատական և բոլոր այլ ծախսերի հատուցմանը, Վարկի գումարի վերադարձի ուշացման կապակցությամբ հաշվարկված տույժերի, տուգանքների և այլ գումարների մարմանը, այնուհետև՝ հաշվարկված տոկոսների, կոմիսիոն և այլ վճարների, ինչպես նաև Վարկի հիմնական՝ մայր գումարի մարմանը:
18. Հաճախորդը, Ընդհանուր պայմաններն ընդունելու հիմքով և պահից իրավունք է վերապահում Ընկերությանը ժամկետանց Վարկի գումարներն անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի՝ ՀՀ բոլոր բանկերում վարվող հաշիվներից: Նշված իրավունքի իրացման շրջանակներում Հաճախորդն իրավունք է վերապահում Ընկերությանը Հաճախորդի անունից հարցումներ կատարել ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերին՝ ստանալով Հաճախորդի հաշիվների և դրանցում առկա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացնել հաշվից միջոցներ դուրսգրելու և այլ հանձնարարականներ, որոնք ենթակա են իրականացման Հաճախորդի հաշիվները սպասարկող բանկերի կողմից անակցեպտ կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ:
19. Այն դեպքում, երբ Վարկի մարմանն ուղղված գումարը բավարար չէ Ընկերության առջև Վարկային պայմանագրից բխող պարտավորության տվյալ օրվա դրությամբ վճարման ենթակա պարտքն ամբողջությամբ մարելու համար, Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Ընդհանուր պայմաններով սահմանված հերթականությունից տարբերվող՝ Վարկային պայմանագրից բխող պարտավորության մարման այլ հերթականություն:
20. Այն դեպքում, երբ Հաճախորդն Ընկերության հետ կնքել է մեկից ավելի Վարկային պայմանագրեր և վերջիններիս շրջանակներում ստացել մեկից ավելի վարկեր, և մուտքագրված գումարը բավարար չէ բոլոր Վարկերի ամբողջական մարման համար, Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ որոշել՝ որ Վարկն է ենթակա առաջնահերթ մարման:
21. Ընկերությունը, Հաճախորդի պարտավորության կատարման օրից առնվազն 1 օր առաջ, վերջինիս հայտնում է մարման ենթակա պարտավորության առկայության մասին, ինչպես նաև այդ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ-ին և ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին տրամադրելու մասին: Ընկերությունը վերոնշյալ տեղեկատվությունը Հաճախորդին հայտնում է անվճար՝ վերջինիս կողմից ընտրված եղանակով՝ կարճ հաղորդագրության (sms) և (կամ) էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

Վարկի վաղաժամկետ մարումը

22. Հաճախորդն իրավունք ունի լրիվ կամ մասնակիորեն վաղաժամկետ մարել Վարկը, եթե հատուկ պայմաններ սահմանված չեն Ծառայությունների նկարագրով: Ընդ որում, Ծառայությունների նկարագրով կարող են նախատեսվել վաղաժամկետ մարման հատուկ ժամկետներ, լրացուցիչ վճարներ և այլ հատուկ պայմաններ:
- Ընդ որում, Հաճախորդի կողմից Վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում համամասնորեն նվազեցվում է Հաճախորդի կրեդիտավորման ընդհանուր ծախսը:
23. Ընկերությունն իրավունք ունի պահանջել անհապաղ վաղաժամկետ վճարել Վարկային պայմանագրով տրամադրված գումարը և վերադարձման ենթակա բոլոր վճարները, ինչպես նաև սահմանափակել Հաճախորդին հասանելի Վարկի օգտագործման իրավունքը և/կամ հրաժարվել Վարկը կամ դրա մի մասը տրամադրելուց, եթե.
- 23.1. պարզվել է, որ Հաճախորդը ներկայացրել է կեղծ կամ ոչ արժանահավատ տվյալներ,
- 23.2. Հաճախորդը սնանկ է ճանաչվել, կամ նրա նկատմամբ հարուցվել է սնանկության վարույթ, կամ Հաճախորդի մոտ առաջացել են սնանկության (անվճարունակության) հիմքեր,
- 23.3. Հաճախորդը հրաժարվում է ներկայացնել Ընկերության կողմից պահանջվող տեղեկատվությունը,
- 23.4. Հաճախորդը թույլ է տվել Վարկային պայմանագրի պայմանների խախտում,
- 23.5. խախտվել են Վարկային պայմանագրի կատարումն ապահովող գրավի, երաշխավորության և/կամ այլ ապահովման միջոցի պայմանագրերի պայմանները,
- 23.6. Ընկերությունը գտնում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված գրավը և/կամ Վարկի վերադարձն ապահովող այլ միջոցները դարձել են ոչ բավարար Վարկի վերադարձն ապահովելու համար և Հաճախորդը, Ընկերության պահանջը ստանալուց հետո եռօրյա ժամկետում չի տրամադրում Ընկերության համար ընդունելի ապահովման այլ միջոց,

- 23.7. Հաճախորդի բանկային հաշիվների և հիմնական այլ գույքի վրա կալանք, արգելանք կամ այլ սահմանափակում է դրվել կամ Հաճախորդի նկատմամբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ վարչական գործ կամ այլ իրավաբանական վարույթ, որը կարող է հանգեցնել Հաճախորդի գույքի զգալի կամ նշանակալից մասի արգելադրմանը և/կամ կորստին և/կամ արժեզրկմանը,
- 23.8. Հաճախորդը բանկերում կամ այլ վարկային կազմակերպություններում ունի ժամկետանց պարտավորություններ,
- 23.9. առկա են այլ հանգամանքներ, որոնք Ընկերության կարծիքով կարող են վտանգել Վարկը մարելու Հաճախորդի կարողությունը:

Ապառիկ վարկավորման առանձնահատկությունները

24. Ապառիկ վարկերն ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք) ձեռքբերելու համար տրամադրվող Սպառողական Վարկերն են, որոնք տրամադրվում են Ընկերության հետ համագործակցող առևտրի և սպասարկման կետերից (այսուհետ միասին նաև՝ «Վաճառող») Ապրանքների ձեռքբերման գինը վճարելու նպատակով:
25. Ընկերության Ակցեատը Հաճախորդի կողմից հաստատվելուց հետո Ընկերությունը Վաճառողի հետ պայմանագրով սահմանված կարգով Վարկի գումարը փոխանցում է Վաճառողին՝ որպես Հաճախորդի կողմից Ապրանքի ձեռքբերման արժեք:
26. Ընկերությունն ունի գրավի իրավունք Վարկի միջոցով ձեռքբերված Ապրանքի նկատմամբ, որպես Վարկային պայմանագրով Հաճախորդի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում:

Վարկային պայմանագրի կատարումն ապահովող գրավի պարտավորության պայմանները

27. Ծառայությունների նկարագրով և/կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ դեպքերում Վարկային պայմանագրի պատշաճ կատարումը կարող է ապահովվել գրավով, երաշխավորությամբ և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կամ չնախատեսված, սակայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող այլ միջոցներով:
28. Հաճախորդի կողմից առաջարկվող գրավի առարկայի նկարագրությունը, ապահովված պարտավորության չափն ու ժամկետները, ինչպես նաև գրավի պայմանագրին ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր պայմաններ սահմանվում են Գրավի պայմանագրով:
29. Վարկային պայմանագրի և ի ապահովումն Վարկային պայմանագրից ծագող պարտավորությունների կատարման կնքվող ապահովման միջոցների պայմանագրերի պայմանների խախտման դեպքում Ընկերությունը կարող է պահանջել վաղաժամկետ վերադարձնել Վարկի գումարը՝ հաշվարկված տոկոսների, տույժերի, տուգանքների և բոլոր այլ վճարների հետ, իսկ այդ պահանջը չկատարելու դեպքում բռնագանձում տարածել Վարկային պայմանագրի կատարումն ապահովող գրավի առարկայի, ինչպես նաև Հաճախորդի այլ գույքի վրա:
30. Հաճախորդի կողմից, ով հանդիսանում է նաև կամ միայն գրավատու, Ընդհանուր պայմաններն ընդունելու հիմքով Հաճախորդի համաձայնությունն առ այն, որ Ընկերությունը առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածի և իրացնի այն, այդ թվում՝ գրավի առարկան Վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների համապատասխան չափի դիմաց Ընկերությանը կամ վերջինիս կողմից նշված այլ անձին որպես սեփականություն հանձնելու համար, համարվում է տրված: Գրավի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձման տարածումն ու իրացումը տեղի է ունենում գրավի պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
31. Հաճախորդը պարտավորվում է բարեխղճորեն աջակցել Ընկերությանը գրավի առարկայի նկատմամբ բռնագանձման տարածումն ու իրացումն անարգել իրականացնելու հարցում՝ որևէ դեպքում արհեստականորեն չխոչընդոտելով գործընթացի բնականոն ընթացքին, այդ թվում նաև թույլատրելով Ընկերության և վերջինիս հետ համագործակցող անձանց անարգել մուտքը Հաճախորդի բնակարան, բնակելի տուն, արտադրական, սպասարկման և այլ տարածքներ, Ընկերության կողմից պահանջ ներկայացվելու դեպքում լիազորել Ընկերության ներկայացուցչին՝ վերապահելով գրավի առարկայի իրացման առնչությամբ ցանկացած գործողություն կատարելու իրավասություն:
32. Բռնագանձման ծանուցումը սահմանված կարգով Հաճախորդին ուղարկելուց հետո երկու ամիս անց Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի անունից իրացնելու գրավի առարկան՝ ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների կամ գրավի առարկան Ընկերությանն ի սեփականություն անցնելու միջոցով, եթե Ընկերությունն ու Հաճախորդը գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն սահմանել: Ընդ որում, գրավի առարկան կարող է իրացվել ուղղակի վաճառքի միջոցով, եթե այդպիսի հնարավորություն նախատեսված է նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ:
33. Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից Ընկերության պահանջներն ամբողջ ծավալով բավարարելուց հետո մնացած գումարը ենթակա է վերադարձման Հաճախորդին:
34. Եթե գրավի առարկայի արժեքը չի բավարարում Վարկային պայմանագրով Հաճախորդի պարտավորությունների ամբողջական կատարման համար, Ընկերությունն իրավունք ունի պակասող գումարը ստանալ Հաճախորդի այլ գույքից:
35. Կողմերը համաձայնում են, որ գրավի առարկան Ընկերության կողմից ի սեփականություն ընդունելու պարագայում իրացված է համարվում այն Ընկերությանն ի սեփականություն անցնելու օրը՝ այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի կողմից որոշված լիկվիդացիոն գնով, եթե Գրավատուին ներկայացվող բռնագանձման ծանուցմամբ գրավի առարկան իրացված համարվելու այլ օր նախատեսված չէ:

Կողմերի պատասխանատվությունը

36. Վարկային պայմանագրի համաձայն Հաճախորդի կողմից Ընկերությանը վճարման ենթակա բոլոր գումարները (մայր գումար, տոկոսներ, այլ վճարումներ) սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում Հաճախորդը պարտավորվում է վճարել նաև տույժ՝ Ծառայությունների նկարագրով սահմանված կարգով և չափով:

Հաճախորդի կողմից սրանձնած պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Ընկերությունը Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը (նաև պարտավորությունը խախտելու մասով) 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, ինչպես նաև հաճախորդների վարկարաժանության համակարգ վարող այլ կազմակերպություններ:

37. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Վարկային պայմանագրի շրջանակներում Հաճախորդի կրած որևէ վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասն արդյունք է Ընկերության աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզուշտության:
38. Վարկային պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հաճախորդը պատասխանատվություն է կրում իրեն պատկանող ամբողջ գույքով:
39. Հաճախորդը կրում է արտարժույթի փոխարժեքի հետևանքով հնարավոր բոլոր անբարենպաստ նյութաիրավական հետևանքները:
40. Վարկային պայմանագրից բխող տույժերը, տուգանային տոկոսադրույքը և պարտավորությունների խախտման արդյունքում որպես պատասխանատվության միջոց Հաճախորդներից գանձման ենթակա այլ գումարները պայմանական են և գանձվում են Ընկերության հայեցողությամբ: Այդ գումարները լրիվ կամ մասնակիորեն գանձելու կամ չգանձելու որոշումներն Ընկերությունը կայացնում է իր բացառիկ հայեցողությամբ՝ հաշվի առնելով Հաճախորդի կողմից Վարկային պայմանագրի խախտման բնույթը: Ընդ որում, առանձին Հաճախորդի կամ Հաճախորդների խմբերի տուգանային տոկոսադրույքների չգանձումը կամ մասնակի գանձումը չի կարող մեկնաբանվել որպես Հաճախորդների գույքային պարտավորության ներում, զիջում կամ Հաճախորդին գույքային պարտավորությունից ազատում:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

41. Կողմերը ժամանակավորապես ազատվում են ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումը անհնարին է եղել անհաղթահարելի ուժի առկայությամբ պայմանավորված:
42. Անհաղթահարելի ուժ են համարվում այն հանգամանքերը, որոնք առաջացել են Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագելուց հետո, պայմանավորված չեն Կողմերից և ոչ մեկի մեղքով, օբյեկտիվորեն անհնարին են դարձնում պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը (այդպիսի հանգամանքից են ջրհեղեղը, պատերազմը, երկրաշարժը):
43. Անհաղթահարելի ուժի առաջացման մասին համապատասխան կողմը պարտավորվում է դրա ծագման պահից եռօրյա ժամկետում այդ մասին պատշաճ կարգով ծանուցել մյուս կողմին:
44. Ընդ որում, եթե անհաղթահարելի ուժը տևում է երկու ամիս և ավել, ապա այն կողմը, որի հանդեպ առկա է կատարման ենթակա պարտավորություն, իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել Վարկային պայմանագրի հիման վրա առաջացած իրավահարաբերությունը:

Այլ պայմաններ

45. Ընկերությունն իրավունք ունի առանց Հաճախորդի համաձայնության գրավ դնել, այլ անձանց զիջել և այլ կերպ փոխանցել Վարկային պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները:
46. Հաճախորդը կարող է գրավ դնել, այլ անձանց զիջել և այլ կերպ փոխանցել Վարկային պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները, Ընկերության նախնական գրավոր համաձայնության առկայության դեպքում:
47. Ընկերության Կրեդիտային ծառայություններից օգտվող Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության Սպառողական վարկավորման պայմանագիրը կնքելուն հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրերի ընթացքում վաղաժամկետ մարել Կրեդիտի գումարը և մարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսներն ու այլ վճարները, այնուհետև՝ լուծել Սպառողական վարկավորման պայմանագիրը: Կրեդիտի վաղաժամկետ մարման դիմաց Հաճախորդը որևէ լրացուցիչ գումար չի վճարում:

Վարկային պայմանագրի փոփոխման կարգը, Կողմերի հաղորդակցությունը

48. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Ընդհանուր պայմանները, Ծառայությունների նկարագիրը և Վարկային պայմանագրի այլ պայմանները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ ծանուցումների համար սահմանված ժամկետները:
49. Կողմերը պայմանավորվում են Ընդհանուր պայմաններից, ինչպես նաև վերջինիս շրջանակներում կնքվող բոլոր, այդ թվում նաև Վարկային պայմանագրերից բխող փաստաթղթաշրջանառությունն ու հաղորդակցումը/ծանուցումները ուղարկումն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ կողմերի էլեկտրոնային հասցեների և/կամ հեռախոսահամարի և/կամ հեռախոսահամարի ներքո գործող հավելվածների (Viber, Whatsup, Telegram և այլն) կամ Հաճախորդին հասանելի՝ Ընկերությանը որևէ Հարթակում Push հաղորդագրությունների միջոցով: Հաճախորդը պարտավորվում է շաբաթական առնվազն մեկ անգամ ստուգել իր այն էլեկտրոնային փոստի հասցեն, որը Հաճախորդը տրամադրել է Ընկերությանը, ինչպես նաև Հաճախորդին հասանելի՝ Ընկերության Հարթակի միջոցով ուղարկված/հասանելի Push հաղորդագրությունները: Ընդ որում, Ընկերության կողմից Հաճախորդի պատշաճ ծանուցումը համարվում է կատարված, եթե Հաճախորդին հասցեագրված Push հաղորդագրությունները միևնույն է Ընկերության կողմից ուղարկվել/հասանելի են դարձվել Հաճախորդին, սակայն վերջինս դրանց հասանելիություն չի ունեցել իր իսկ կողմից Push հաղորդագրություններ ստանալու ֆունկցիոնալն անջատելու/ապակտիվացնելու արդյունքում: Պայմանագրում նշված կողմերի էլեկտրոնային հասցեներին և/կամ հեռախոսահամարին և/կամ հեռախոսահամարի ներքո գործող հավելվածների (Viber, Whatsup, Telegram և այլն) միջոցով ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ ծանուցումներ դրանց ուղարկման պահից՝ անկախ վերջիններիս կողմից Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեն և/կամ հեռախոսահամարը և/կամ հեռախոսահամարի ներքո գործող հավելվածները փաստացի ստուգված, իսկ ուղարկված ծանուցումը կարդացված լինելու հանգամանքից, իսկ փոստային հասցեի կիրառմամբ կամ Ընկերության տարածքում առձեռն ծանուցումները՝ կատարված առաքման պահից: Ընդ որում, Հաճախորդն իրավասու է ցանկացած պահի Ընկերություն ուղարկված գրավոր ծանուցմամբ հրաժարվել էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառությունից և հաղորդակցումից՝ որպես իր համար նախընտրելի եղանակ նշելով փոստային եղանակով կամ Ընկերության տարածքում առձեռն փաստաթղթաշրջանառությունն ու հաղորդակցումը: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառությունից և հաղորդակցումից հրաժարում է համարվում նաև Հաճախորդի կողմից էլեկտրոնային

եղանակից տարբերվող այլ եղանակ նախընտրելու վերաբերյալ Ընկերություն ներկայացված գրավոր ծանուցումը: Առձեռն տարբերակով տեղեկատվության տրամադրման ընտրությունը չի բացառում նույն տեղեկատվությունը Հաճախորդին փոստային, էլեկտրոնային և/կամ կապի այլ միջոցներով՝ հեռախոս, կարճ հաղորդագրություն, տրամադրելու Ընկերության պարտականությունը:

50. Ընդհանուր Պայմանների և վերջինիս շրջանակներում կնքված Վարկային պայմանագրերի շրջանակներում Ընկերության և Հաճախորդի միջև հաղորդակցությունն իրականացվում է Դիմումում և Ակցեպտում ծանուցման համապատասխան եղանակի համար անհրաժեշտ տվյալների կիրառմամբ և/կամ կապի միջոցներով: Դրանցով կատարված ցանկացած ծանուցում համարվում է ստացված՝ Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ընկերությանը իր կապի միջոցների և հասցեի փոփոխությունների մասին:
51. Եթե 49-րդ կետում նշված հասցեներով կամ կապի միջոցներով Ընկերությունը չի կարողանում կապ հաստատել Վարկառուի հետ, ժամկետանց վարկային պարտավորություն ունենալու դեպքում, Ընկերության աշխատակիցը իրավունք ունի մինչև վարկի ամբողջական մարումը այցելել Հաճախորդի բնակության կամ աշխատանքի վայր, ժամկետանց պարտքի մարման հետ կապված բանակցությունների վարման նպատակով:

Անձնական տվյալների մշակում

52. Հաճախորդի կողմից Ընդհանուր պայմանների ընդունմամբ Հաճախորդը համաձայնում է, որ Հաճախորդի հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու, պայմանագրերում և այլ փաստաթղթերում Հաճախորդի վերաբերյալ տվյալներ զետեղելու, Հաճախորդին նույնականացնելու, փողերի ծագման աղբյուրը պարզելու, Հաճախորդի վարկավորման հնարավորությունները գնահատելու, Հաճախորդին տրամադրված Վարկերի ընթացիկ մոնիթորինգ իրականացնելու, տվյալները թարմացնելու, ինչպես նաև Հաճախորդներին Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, Վարկերի/Կրեդիտների վերաբերյալ մարքեթինգային բնույթի առաջարկներ ներկայացնելու նպատակներից ցանկացածից կամ բոլորից ելնելով՝ Ընկերությունն իրավասու է.
- 52.1. հավաքագրել, պահպանել, օգտագործել Հաճախորդի հետևյալ Անձնական տվյալները և դրանց առնչությամբ կատարել ՀՀ օրենսդրության համաձայն Անձնական տվյալների մշակում հանդիսացող ցանկացած գործողություն,
- 52.2. Հաճախորդների նկատմամբ կիրառել տեսագրող, լուսանկարող, ձայնագրող և այլ հատուկ տեխնիկական միջոցներ,
- 52.3. Հարցում կատարել պաշտոնական տեղեկատվական շտեմարաններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող տվյալների բազաներ հետևյալ Անձնական տվյալների ստացման համար, որոնք զետեղված են Ընկերության պաշտոնական կայքէջում՝ <https://credofinance.am/wp-content/uploads/2026/05/2.1-stacvogh-anjakan-tvyalheri-nkaragrutyun.pdf>
- 52.4. ստանալ Հաճախորդի Անձնական տվյալներ՝ ցանկացած այլ իրավաչափ աղբյուրից,
- 52.5. օգտագործել Հաճախորդի կողմից տրամադրված կամ Ընկերությանն այլ կերպ հասանելի՝ Հաճախորդի հաղորդակցման տվյալները՝ վերջինիս ծանուցումներ և փաստաթղթեր ուղարկելու, այլ կերպ հաղորդակցվելու համար՝ հիմք ընդունելով Ընդհանուր պայմաններով սահմանված կարգի պահպանմամբ Հաճախորդի կողմից ընտրված հաղորդակցման և փաստաթղթաշրջանառության եղանակը:
53. Հաճախորդի կողմից Ընդհանուր պայմանների ընդունմամբ Հաճախորդը համաձայնում է, որ Հաճախորդներին Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, Վարկերի/Կրեդիտների վերաբերյալ մարքեթինգային բնույթի առաջարկներ ներկայացնելու նպատակով Ընկերությունն իրավասու է հարցումներ կատարել ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ և ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստր Հաճախորդի վարկային պարտավորությունների, դրանց սպասարկման ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս փոխանցել Հաճախորդի անցյալ և ներկա վարկային պարտավորությունների և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընդհանուր պայմաններով սահմանված կարգով:
54. Հաճախորդի կողմից Անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը գործում է Հաճախորդի և Ընկերության միջև պայմանագրային հարաբերությունների ողջ ընթացքում, ինչպես նաև դրանց դադարումից հետո ևս հինգ տարի ժամկետով, իսկ եթե համաձայնության հիման վրա կատարված հարցման արդյունքում Վարկային դիմումը մերժվել է և/կամ Ընկերությունը կամ Հաճախորդը որևէ այլ հիմքով հրաժարվել են Վարկային պայմանագրի կնքելուց, ապա համապատասխանաբար նման մերժումից կամ հրաժարումից հետո ևս հինգ տարի ժամկետով: Ընդ որում, Հաճախորդն իրավասու է հետ կանչել իր կողմից տրված համաձայնությունը Ընկերությանը գրավոր դիմելով, և Ընկերությունը կդադարեցնի Անձնական տվյալների մշակումը, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Ընդ որում, Հաճախորդի կողմից իր Անձնական տվյալների մշակման համաձայնության հետ կանչման պարագայում Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդի նկատմամբ կիրառել սահմանափակումներ՝ ընդհուպ մինչև Վարկային պայմանագրի դադարեցում և/կամ Վարկի/Կրեդիտի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացում:
55. Հաճախորդի կողմից Ընդհանուր պայմանների ընդունմամբ Հաճախորդը համաձայնում է, որ Ընկերությունն իրավասու է Հաճախորդի Անձնական տվյալները հասանելի դարձնել և/կամ տրամադրել՝
- 55.1. Ընկերության հետ համագործակցող երրորդ անձանց, ովքեր տեխնիկական կամ այլ առումով համագործակցում են Ընկերության հետ՝ վերջինիս գործունեության իրականացման շրջանակներում;
- 55.2. քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ Ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով:

Վեճերի լուծումը, արբիտրաժ

56. Հաճախորդն ու Ընկերությունը պայմանավորվում են Ընդհանուր պայմաններից, ինչպես նաև վերջինիս շրջանակներում կնքված Վարկային պայմանագրից բխող բոլոր տարաձայնությունները կարգավորել բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով: Ընդ որում, Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն ուսումնասիրել մյուս կողմի ներկայացրած փաստարկներն ու ձեռնարկել համարժեք քայլեր՝ տարաձայնությունը բարեկամաբար հարթելու համար:
57. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը ենթակա է լուծման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու կարգը

58. Հաճախորդն իրավունք ունի Սպառողական վարկավորման պայմանագրից բխող ցանկացած պահանջ ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, Ընկերությունը հայտարարում է, որ չի կնքել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները բողոքարկելու իրավունքից հրաժարվելու մասին համաձայնություն:
59. Նախքան ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելը Հաճախորդը պարտավոր է Ընկերությանը ներկայացնել բողոք-պահանջ: Այն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը տրամադրում է վերջնական պատասխան:
60. Ընկերության պատասխանին համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք է ձեռքբերում պահանջը ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին:
61. Ընդ որում, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննության են ենթակա այն պահանջները, որոնք ներկայացվում են Հաճախորդի կողմից Ընկերության դեմ, կապված են Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

Ընկերության գործունեության պայմանները. «Կրեդիտ Ֆինանս» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի 2013թ. փետրվարի 5-ի թիվ 30Ա որոշմամբ (պետական գրանցման վկայական թիվ 169, գրանցման համարը՝ 38, ՀՎՀՀ՝ 00120937): Ընկերությունը, համաձայն ունիվերսալ վարկային կազմակերպության լիցենզիայի (լիցենզիա թիվ 38), մատուցում է սպառողական վարկավորման և այլ ծառայություններ: Ընկերության հասցեն է՝ ՀՀ. ք.Երևան, Կիևյան 2-րդ նրբանցք, տուն 16, էլ փոստ՝ credo@credofinance.am, հեռ.060465555; մասնաճյուղեր՝ Բաշինջաղյան 192; Բազրատունյաց 6, 1ա; Տիգրան Մեծի 69, 1/2 տարածք; Անդրանիկի 147; Ա. Միկոյան 21/2: